ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՅԼ ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ԱՆԱՀԻՏ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի մայիսի 4-ից մինչև 2023 թվականի օգոստոսի 4-ը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կենսաթոշակային ապահովության և այլ դրամական վճարների վարչության փորձագետ Ռոզա Մկրտչյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ

1. Հաշվետու ժամանակահատվածում մշակել (լրամշակել) եմ հետևյալ իրավական ակտերի նախագծերը.

1) «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթ (31.07.2023 թիվ ՆՄ/ԱԳ-1/18939-2023 գրությամբ ուղարկվել է շահագրգիռ մարմիններ).

2. Կարծիքներ եմ տվել կենսաթոշակային ապահովության վարչության քննարկմանը ներկայացված՝ կենսաթոշակային ապահովության բնագավառին և նպաստներին առնչվող օրենքների և այլ իրավական ակտերի հետևյալ նախագծերի վերաբերյալ.

1) Արդարադատության նախարարությունից ստացված «Կատարողական վարույթի մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի.

2) ՌԴ աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարությունից ստացված «ԱՊՀ համաձայնագրի Ուկրաինայի նկատմամբ սահմանված գործողությունը դադարելով պայմանավորված քաղաքացիների կենսաթոշակի, աշխատանքային ստաժի և այլ գործարքներից օգտվելուց զրկվելու վերաբերյալ» դիրքորոշում տրամադրելու.

3) Արտաքին գործերի նախարարությունից ստացված «Աֆղանստանում և այլ պետություններում, վարած մարտական գործողությունների ընթացքում զոհված

զինծառայողների ընտանիքների անդամներին պետական սոցիալական օգնության տրամադրման մասին» 1993թ. սեպտեմբերի 24-ի համաձայնագրով և Համաձայնագրին կից արձանագրություններով Ուկրաինայի նկատմամբ սահմանված գործողությունը դադարելու վերաբերյալ դիրքորոշում տրամադրելու.

4) «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների Սահմանապահ զորքերի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովման և Սահմանապահ զորքերի զինծառայողների պետական ապահովագրման կարգի մասին» 1992թ. մայիսի 15-ի համաձայնագրի Ռուսաստանի Դաշնության նկատմամբ դադարելու վերաբերյալ դիրքորոշում տրամադրելու.

5) «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների զինծառայողների և նրանց ընտանիքների կենսաթոշակային ապահովության և զինծառայողների պետական ապահովագրության կարգի մասին» 1992թ. մայիսի 15-ի համաձայնագրի Ռուսաստանի Դաշնության նկատմամբ դադարելու վերաբերյալ դիրքորոշում տրամադրելու.

6) Արդարադատության նախարարությունից ստացված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Առևտրի և ծառայությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի.

7) Արդարադատության նախարարությունից ստացված ««Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի, «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագերի փաթեթի.

10) Պետական պահպանության ծառայությունից ստացված «Հայաստանի Հանրապետության կառավարության թվականի մայիսի 5-ի N 665-Ն, 2011 թվականի մայիսի 5-ի 670-Ն, 2018 թվականի օգոստոսի 9-ի N 916-Ն, 2021 թվականի փետրվարի 4-ի N 141-Ն, 2014 թվականի սեպտեմբերի 25-ի N111-Ն և 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N 1749-Ն որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի:

3. Մասնագիտական եզրակացություններ եմ պատրաստել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից,

կազմակերպություններից ստացված՝ կենսաթոշակային ապահովության բնագավառին, ինչպես նաև պարգևավճարին և նպաստներին վերաբերող օրենսդրության առնչությամբ ստացված գրությունների և հարցումների վերաբերյալ:

4. Քննարկել և վերլուծել եմ կենսաթոշակային ապահովության բնագավառին, ինչպես նաև պարգևավճարին և նպաստներին վերաբերող օրենսդրության առնչությամբ քաղաքացիներից ստացված դիմումները և դրանց սահմանված կարգով տվել եմ համապատասխան ընթացք:

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ **ՌՈԶԱ ՄԿՐՏՉՅԱՆ**

04.08.2023 թ.